

7754


633.2

W-85

2002

2011

ՄԵ. Վ. Մ. 8.12




ՀՀ Արմ.

Ա. ԱՐԴԱՍԵՆՈՎ:

Խ Ր Ա Տ


ԱՐՕՏԱԽՈՏԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ԱՌՈՒՅՑ: ԵՐԵՎԱՆ: ԿՈՒՐԻՆԳՆԵ:



ԹԱՐԳՄ. ՌՈՒՍԵՐԼՆԵՑ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՄԸ ԳԻՒՂԱՏՆԵՍ

Գ. ԿԱՆԴՈՒՐԱՆՆԵՐ:



ԿԽԲ. №

2134

5/VIII

Ե Ր Ե Ւ Ա Ն

ՏՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱԳԱՆ ԱՏԵԱՆԻ

1912

Արմ.

3-3124_a

633.2

Ա-85

Խ Ր Ա Տ

ԱՐՕՏԱԽՈՏԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ԱՌՈՒՅՑ: ԵՕՆՋԱ: ԿՈՒՐԻՆԳԱՆ:

Ե՞րբ հողը լաւ հուճճ չի տալիս:

Երբ ամեն տարի հողից վերցնում են ցորենի, գարու, կարտոփիլի և այլ բոյսերի հուճճ, իսկ նոյն հողին այս բոլորի փոխարէն ոչինչ չեն վերադարձնում աղբով կամ ուրիշ պարարտացնող միջոցներով:


Երբ վատ են մշակում հողը և մշակում են ոչ թէ գութանով, այլ քչփորում են նոսն անդրձրհեղեղեան կեռերով կամ արօրով՝ փոխանակ հերկելու նրան ժամանակակից կատարելագործւած գութաններով:

Երբ լաւ և բնորոշ տեսակի սերմերի փոխարէն վարելահողը ցանում են վատ մաքրած և չբնասած խակ սերմերով:

Եւ մանաւանդ այն ժամանակ, երբ տառնաւոր և հարիւրաւոր տարիներ ազգաբնակչութիւնը ծանօթ է միայն հացաբոյսերի մշակութեան հետ և միայն այդ բոյսերն է ցանում և հնձում. — ցորեն ու գարի, գարի և ցորեն և էլ ուրիշ ոչինչ՝ շատ ու շատ տառնակ տարիների ընթացքով:

Ինչպէս մարդը չարունակ աշխատելու համար անդադար կերակրւելու է կարօտ՝ այնպէս էլ հողն է պահանջում, որ իրան վարձատրեն — կերակրեն

44757. աւ



29359-60

ԿԿՅ. № 10679

մշակութեամբ, փոխարեն այն միլիոնաւոր փութ
ցորենի, հաճարի, գարու և այլն, որ ամեն տարի
նա մատակարարում է ինչպէս մի ստնտու և առա-
տաձեռն մայր:

Առանց մի այդպիսի փոխարինութեան՝ վերջ ի
վերջոյ հողը կը հրաժարւի իր վրայ չափող մարդ-
կանց կերակրելուց:

Ինչպէս մարդկանց համար լաւ չէ և ձանձրալի
է շարունակ միմիայն հաց, ձուկ կամ միս ուտելը,
այնպէս էլ հողը, եթէ կարելի է այսպէս ասել, չի
սիրում, յոգնում և ուժասպառ է լինում, երբ ամեն
տարի ցանում են իր մէջ միևնոյն հացաբոյսերը:

Տարուէտարի միևնոյն տեղի վրայ առանց հողը
պարարտացնելու միայն հացաբոյսի ցանելուց և
նոյն հողը արօրով կամ կեռերով վարելուց, որ հողի
մէջ միայն 1½ - 2 վերջոյ է միայն խրում, վատ
սերմացուի ժամանակ, հողի վերին շերտը, որտեղ
տարածւում են հացաբոյսերի սերմերի արմատնե-
րը, յոգնում է նոյն նիւթերով - հալից ընկնում է և
դադարում է բերք տալուց:

Երևանի նահանգի Նոր-Բայազիտի, Երևանի, Էջ-
միածնի և այլ գաւառների լեռնային հողերը բոլորն
էլ ուժասպառ են եղել վերոյիշեալ պատճառներից:
Բոլոր տեղերումն էլ անտառ - վառելափայտ չկայ
և եթէ կայ՝ շատ քիչ, դրա համար էլ անասուննե-
րի աղբը գործադրւում է ոչ թէ գաշտերը պարար-
տացնելու, այլ վառելիքի համար աթարի ձևով:
Ամեն տեղ հերկում են վատթար կեռով, ցանում են
վաղուց փշացած և վատընտիր սերմեր:

Բացի դրանից լեռներում շատ քիչ հարթ հա-
ւասար տեղեր կան, ջրաբքի հողերը աւելի ևս քիչ:
Գիւղացու բոլոր հողերի ³/₄ մասը բաղկացած է լեռ-
ներից, դիք, քարքարոտ, խճոտ և անջրդի զառիվայր-
ներով: Զիւնի և անձրևի ջրերը այդ զառիվայրերից

քշում, տանում են ներքի բուսականութեան բոլոր
օրգանական մնացորդները և այն՝ շատ յաճախ ցա-
նած սերմերով:

Ի՞նչպէս անել, որ հողը ուժասպառ չը լինի
և կրկին լաւ բերք տայ:

Ներկայումս ուժասպառ և հոգնած հերկը գիւ-
ղացիք ձգում մի կողմ են թողնում մէկ, երկու և
աւելի տարիներ հանգստանալու համար, յուսալով,
որ նա կը հանգստանայ և երկու, երեք տարի կրկին
լաւ բերք կը տայ: Բայց արդեօք նա կարողանում է
հանգստանալ և վերանորոգել իր ուժերը: Ո՛չ, չի
կարողանում: Ինչո՞ւ: Նրա համար, որ լեռնային
շերտի վրայ բնակւող ազգաբնակիւթիւնը հողով
սպահովւած չէ: Մէկ, երկու տարուց յետոյ գիւղա-
ցին հարկադրւած է հանգստանալու համար թողած
հողը կրկին հերկել, որ մի կերպ կարողանայ ընտա-
նիքը կերակրել: Հանգստութեան այդ կարճ ժամա-
նակում հողը չի կարող վերանորոգել իր ուժերը և
չի կարող լաւ բերք տալ:

Գործի վերջը վատ է դուրս գալիս: Այդպիսով
անտեսութիւնը երբէք չի ուղղւի: Այդ դեռ քիչ է,
տարի տարւայ վրայ նեղ ու դժուար կը լինի աղ-
բելը, որովհետև ժողովուրդը միշտ աւելանում է,
իսկ հողը չի մեծանում և նրա ամեն մի հոգու բա-
ժինը քանի գնում քչանում է:

Կարելի կը լինէր հողը պարարտացնել՝ բայց
անասունների աղբը մեզնում վառելիքի տեղ է գոր-
ծածւում, իսկ միւս պարարտացնող միջոցները թանկ
արժեն և նրանց դրսից բերել տալը գիւղացու տըն-
տեսութեան ներկայ դրութեան ժամանակ անհնա-
րին է:

Հողի մշակութեան գործին կարելի է օգնել կե-

ութի և արօրի փոխարէն մշակելով նրան գութանով և ուրիշ կատարելագործած գործիքներով ու մեքենաներով, օգտակար է նոյնպէս սերմերի յաճախ փոփոխելը, բերել տալով նրանց լաւ տեսակները, խնամքով ջոկելով ու զտելով: Բայց այս բոլորը օգնում է երկրագործին առանց նրան վերջնականապէս հանել կարողանալու թշուառ դրութիւնից:

Անհրաժեշտ է մշակել արօտաբոյսեր և արօտի արմատապտուղներ:

Գիւղացու տնտեսութիւնը վերջնականապէս կարող է ուղղել և ոտքի վրայ կանգնել միայն այն ժամանակ երբ ամեն մի երկրագործ իր, այժմ հացաբոյսերով ցանւած հողերի մի մասը կը յատկացնի եօնջայի կամ այլ նման բոյսերի ցանելուն, նայելով, թէ ռոտեղ ինչ է յարմարում և լաւ կը բուսնի, կարելի է ցանել նաև արօտի արմատապտուղներ—կարտոփիկ, ճակնդեղ, գազար, շաղգամ և այլն:

Եօնջան մշակւում է մեզնում և բոլորին յայտնի է: Նա ցանւում է ներքեւում ջրարբի հողերում և տալիս է, խուրձի գինը 4 կոպէկ հաշւելով, 7 ֆունտ ծանրութեամբ, 180 ր. ընդհանուր եկամուտ: Թոյլ տալով, որ եօնջան լաւ բերք տալիս է միայն 8 տարւայ ընթացքում և նրա մշակութեան ծախքը մինչև անգամ 30 ր. հաշւելով՝ մաքուր եկամուտ կը կազմի մէկ դեսետալինից 150 բուբլի, 4000—5000 խուրձից ոչ պակաս երեք հնձից: Այս միջին թւով:

Այսպիսի ճիշտ եկամուտ գիւղացուն չեն տայ երեք դեսետալին ցորենը, եթէ լաւ հաշւենք իւրաքանչիւր տարւայ ծախքը—սերմերի, մշակութեան, հնձի, կոյսելու և այլն: Եօնջի սերմերի և մշակութեան համար պէտք է ծախսել միայն առա-

ջին տարին, իսկ յետոյ 8—10 տարւայ ընթացքում ջրւում է միայն և բերքը հնձւում:

Ինչի՞ն վերագրել հացահատիկների լաւ հունձը եօնջից և այլ բակլայանման բոյսերից յետոյ:

Նահանգի ազգաբնակչութեան նշանաւոր մասին յայտնի է նոյնպէս, որ այնտեղ, ուր եօնջա է ցանւած եղել, հացահատիկները երկու տարի ընտիր հունձ են տալիս, այնպէս որ՝ կարծես թէ դաշտը աղբով պարարտացած լինէր: Դուրս է գալիս, որ եօնջան, բացի խոտի լաւ եկամուտ տալուց՝ հողը պարարտացնում էլ է: Իսկ պարարտացնում է նա հողը իր երկար արմատներով, որոնք գետնի մէջ շատ խորն են թափանցում, մինչև 2—3 և աւելի սաժէն լաւ հողերի վրայ: Այդ արմատներով նա կերակուր է ծծում գետնի տակի ստորին խաւերից: Այդ հաստ ու երկար արմատների շնորհիւ հողի մէջ աւելի շատ օդ է ներս մտնում և նոյն ինքն այդ արմատները փթելով՝ սնունդ են մատակարարում յաջորդ բոյսերի համար: Բացի դրանից եօնջի և րակլայնման*) այլ բոյսերի արմատների վրայ, ապրում են առանձին ստորին կարգի կենդանիներ (միկրօօրգանիզմներ), որոնք ընդունակ զն կլանել օդի ազատ բորակածինը եւ դարձնել այն իրենց մարմնի բաղադրիչ մասերը: Ամբողջ սերունդներ մեռնելով բակլայանման բոյսերի արմատների վրայ, նրանք պարարտացնում են հողը ազօտեայ (բորակածին պարունակող) միաւորութիւններով: Բակլայանման բոյսերի այդ առանձնահատկութեան շնորհիւ էլ նրանց կոչում են բորակահատաւորներ:

*) Մոփորական սիսեռը, Լորին, րակլան, եօնջան, կօրինդան կոչւում են բակլայանման բոյսեր:

Յիշատակւած հանգամանքներով է բացատրւում առույտից, եօնջից, կուրինգանից և բակլայնման այլ կուլտուրական բոյսերից յետոյ հացաբոյսերի գեղեցիկ աճումը:

Երևանի նահանգի լեռնաշերտի վրայ արօտախոտերից զոն է աւելի ձեռնտու աճեցնել:

Բայց եօնջան ջրել է պահանջում, նրան չի կարելի աճեցնել լեռների չոր, քարոտ և անջրդի գառիվայրերի վրայ:

Կասկած չվերցնող փաստ է, որ լեռնաշերտերում ջրարբի և հարթ տեղեր, ուր կարելի լինէր մշակել - աճեցնել եօնջան, շատ քիչ են, գիւղացիների բոլոր հողերի $\frac{1}{4}$ մասն անգամ չեն կազմում, մնացած $\frac{3}{4}$ -ը կամ մինչև անգամ գիւղացու ձեռքն եղած հողաբաժնի աւելի մեծ մասը անջրդի լեռների գառիվայրներ են:

Ահա այդ հողերը հացաբոյսերի մշակութեամբ երկրագործին ոչինչ չեն տալիս, շատ յաճախ վերադարձնում են նրա սերմացուն:

Այդ չոր և ներկայումս անօգուտ գառիվայրերի համար էլ ես առաջարկում եմ ցանել եօնջի մի տեսակը, որ իշառույտ է կոչւում: Թուրքերը «կուրունջա» են ասում դրան, իսկ հայերը այդ խօսքից վերցնելով «կուրինգան», որ նշանակում է չոր եօնջա: Նա ընտիր հունձ է տալիս և ամեն ամառ երկու քաղ՝ անջրդի հողերի վրայ, որ կազմում է այդ բոյսի առանձին արժանաւորութիւնը և գինը: Այդ կուրինգանի արմատները աւելի խորն են թափանցում հողի մէջ քան եօնջինը: Իրեն յարմար հողերի վրայ նա դիմանում է 15 և աւելի տարի: Կուրինգանից յետոյ հացահատիկները այնպէս լաւ են աճում ինչպէս և եօնջից յետոյ: Ուրիշ երկրներում - Թրան-

սիայում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Տաճկաստանում և այլն, նա մշակւում է մեծ քանակութեամբ: Փոքր քանակութեամբ մշակւում է նա և մէզնում Հարաւային Ռուսաստանում և Կովկասում - Կոբլիանի գաւառամասում, Թիֆլիսի նահանգում, Կարսի վիճակում, յատկապէս Կարսի շրջանում և Երևանի նահանգի Նախիջևանի գաւառում:

Կուրինգանը վայրի դրութեամբ շատ է տարածւած Նոր-Բայազիտի գաւառում, Կարսի շրջանում և Կովկասի ուրիշ տեղերում: Այդ ապացոյց է, որ նա մեզնում, եթէ մշակւի, լաւ կաճի:

Կուրինգանի ցանքերի վրայ 1908, 1909 և 1910 թւականներին իմ արած փորձերը շատ լաւ ապացուցեցին այդ: Նոր-Բայազիտի գաւառի ազգաբնակիւթիւնը արդէն գիտէ թէ Ներքին-Ախտա գիւղի բնակիչ Յակոբ Լեօնովի, Ախպարա գիւղացի Նիկողոսեանի, Դարաշիշագում Իվան Չերնեշովի և այլոց կուրինգանը ինչպէս են աճում:

Այդ բոլոր տեղերում կուրինգանը մենք ցանում ենք սուերատու - հովանաւոր բոյսի - գարնանացան ցորենի կամ գարու հետ և առաջին տարին ստացւում է ցորենի կամ գարու բերք, երկրորդ տարին կուրինգանի մէկ լաւ հունձ, 200 - 250 փութ չոր խոտ, երրորդ տարին ստացւում են արդէն երկու հունձ - 400 փութ ընտիր խոտ մէկ դեսեառինից:

Եօնջի նշանակութիւնը լեռնաշերտում:

Եօնջան 5000 ոտն. ծովի մակերևոյթից բարձր շերտում անջրդի հողերում զգալի կերպով կուրինգանից վատ է աճում: Հաւանական է, որ նա ինչպէս փափուկ, խոնաւ կլիմա և խորը ջրաբեր հող սիրող մի բոյս, երբէք չի տայ նոյն մասում մէկ

քաղից աւելի: Այդ հանգամանքը ճշտուում է նաև մեր փորձերի ժամանակ:

Առույտի տեղն ու նշանակութիւնը լեռնաշերտի ապագայ տնտեսութեան մէջ:

Լեռնաշերտում կուրինգանի հետ պէտք է նշանակութիւն ձեռք բերեն առույտը և նրա խառնուրդները: Այդ բոյսի վայրի տեսակները շատ են տարածւած այստեղ, ուրեմն նրանց մշակութիւնը պէտք է յաջողութիւն ունենայ:

Բացի դրանից առույտը եօնջայից և կուրինգանից որպէս աւելի շարժուն բոյս հողափոխութեան համար աւելի է յարմարւում: Հողի սակաւութիւնը ստիպում է ազգաբնակութեանը կարճ ժամանակով — մէկ, երկու, երեք տարով միայն հանգիստ թողնել վարած և յոգնած հողերը:

Այդ ժամանակամիջոցում վարելահողը ծածկւում է քոլերով և փշերով, որոնք յաճախ հնձուում են անասունների կերի համար, որպիսի «խոտ»-ից մի ղեսեաւտինի վրայից հաւաքւում է 12—15 փութ:

Մենք շատ նպատակայարմար ենք համարում այդպիսի վարելահողի հանգիստ թողնելու փոխարէն ցանել նրա վրա վերջին հացի հետ առույտը կամ նրա խառնուրդը: Չնչին քանակութեամբ քոլի փոխարէն գիւղացին կը հաւաքէ 2—3 տարւայ ընթացքում գոնէ ընտիր խոտ աւնուազն 200 և աւելի փութ: Նրանից յետոյ վարած առույտատեղը կը տայ հացաբոյսերի ամենալաւ հունձ, քան թէ այն ժամանակ երբ վարելահողը հանգստանում է քոլի և փշերի բուսականութեամբ:

Վերոյիշեալ հանգամանքի պատճառով աւելի շուտ առույտը քան կուրինգան և եօնջան կը մտցնւի

ցանքափոխութեան մէջ, ուրեմն պտղափոխութեան սխտեմին անցնելու դարկ կը տայ:

Եօնջի ցանքերի փորձերը կանենք մենք ներկայ թւականի աշնանից:

Բակլայանման արօտաբոյսերի գլխաւոր առանձնայատկութիւնները:

Ամենից առաջ մեր ուշադրութիւնը իր վրայ է դարձնում բակլայանման բոյսերի արմատը: Գլխաւոր արմատը խիստ զարգացած է և տալիս է իրանից բազմաթիւ յաւելեալ արմատներ սերմի աճելու ժամանակից, որոնք ձգտում են մտնել հողի ստորին խաւերի խորքը: Եօնջի և այլնման բոյսերի արմատները թափանցում են 3 եւ աւելի սաժէն գետնի մէջ, հանելով հողի ստորին շերտից իրենց համար սննդաւոր նիւթեր և փոխադրելով նրանց հողի վերին շերտերը:

Բակլայաբոյսերը իրենց արմատներով ամրացնում են հողը թոկի պէս: Գետնափորները գիտեն, թէ ինչպէս գժւար է փորել վայրի բակլայաբոյսերով ծածկւած խոտ հողը, որոնց մատերի հաստութեամբ ղեղին արմատները գժւար են կտրուում մինչև անգամ սուր բահերով: Մեր լեռնային, յաճախ թեթիւ սողացող հող ունեցող գաւիպայրերի համար, բակլայաբոյսերի ցանքերը ամրացնելով հողը, պէտք է մեծ դեր կատարեն: Իրենց արմատների շնորհիւ, բակլայաբոյսերը երաշտութեան համար աւելի քիչ զգայուն են, որի մէջ մեզ համոզեցին եօնջի մեր փորձնական ցանքերը: Անցած 1908, 1909 և 1910 թւականները աչքի էին ընկնում չտեսնուած շոգով և երաշտով: Նրանք կտրեցին ազգաբնակութեան լաւ հունձի դրական յոյսերը: Չնայելով դրան, մեր խոտերի հունձի վրայ այդ շոգերը ոչ մի վնասակար ազդեցութիւն չարին:

Բակլայաբոյսերը աւելի բարեբեր են, քան, օրինակ, այլ բոյսերը՝ շնորհիւ նոյն ուժեղ արմատների և նրանց թփաւորութեան ընդունակութեան: Բակլայաբոյսերի պարանոցը, այսինքն այն տեղը, որ բաժանում է բոյսի հողի երեսին գտնւող մասերը հողի տակ գտնւող մասերից, կողքերից ծածկւած է բողբոջներով, որոնք նոր ցողունի սկիզբն են տալիս: Այդ շառաւիղներով բակլայանմանների արմատի գլուխը, օրինակ եօնջի և նմանների, բաժանւում է առանձին հաստ ճիւղերի, որոնք ընդունակ են, իրենց կարգին, բաժանւելու նոր ճիւղերի: Հէնց այդ է թփաւորութիւնը քակլայաբոյսերի զործնական մշակութեան պայմաններից մէկը: Մեր փորձնական հողամասերում երկրորդ տարին ես եօնջի վրայ հաշւեցի 30—40 առանձինցողուններ, որոնք զուրա էին գալիս արմատի գլխից: Բայց բակլայաբոյսերի ամենագլխաւոր առանձնայատկութիւնը պէտք է համարել այն հանգամանքը, որ նրանք աղբով պարարտացնելու կարիք չեն զգում շնորհիւ այն միկրոմարմինների, որոնց ունեցած նշանակութեան մասին բակլայաբոյսերի կեանքի մէջ աւելած է վերելում:

Այն հանգամանքը, որ բակլայաբոյսերից յետոյ հացաբոյսերը լու են աճում, ահագին նշանակութիւն ունի ցանքափոխութիւնը հեշտացնելու գործում և պողպափոխութեան սխառեմը անտեսութեան մէջ մտցնելու համար: Եթէ մեր առաջիկայ փորձերը առոյտի հետ յաջող երեւին, այն ժամանակ երևանի նահանգի լեռնային շերտի շատ մասերում կարելի կըլինի արգէն մտցնել զիւղական անտեսութեան մէջ առոյտի ցանքափոխութիւնը, իսկ եօնջան ու կուրինգան առ այժմ կըմնան առանձին հողաբաժինների վրայ:

Արօտախոտերի մշակութիւնից ստացած օգուտները:

1) Արօտախոտերի ցանքերը շատացնում են անտեսութեան արօտամնտի միջոցները և լաւացնում են անտեսունների սնունդը, կաթի, իւղի և պանրի քանակութիւնը:

2) Տնտեսութեան մէջ կարելի է լինում շատացնել անտեսունների քանակութիւնը եւ լաւացնել նրանց տեսակը, որ շատ մեծ նշանակութիւն ունի լեռնաշերտում, ուր հացաբոյսերի մշակութիւնը երբեք չի տպահովում մարդու գոյութիւնը:

3) Խոտացանութիւնը անտեսութեան մէջ շատացնում է աղբի—փէյնի քանակութիւնը, որ նոյնպէս շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ նա ապագայում, բացի վառելիքից, կըգործադրւի նաև գաշտերի պարարտացնելու համար:

4) Բակլայաբոյսերը, ինչպէս վերը ասեցաւ, իրենց երկար արմատների շնորհիւ լաւացնում են հողի ֆիզիքական յատկութիւնները, նպաստելով օդի անցնելուն հողի ստորին մասերի խորը շերտերի մէջ:

5) Նրանք հարստացնում են հողը աննպարար նիւթերով: Նրանց երկար արմատները, ներքին շերտերից հանելով աննպարար նիւթերը, փոխադրում են նրանց հողի վերին շերտերը: Բացի դրանից բակլայաբոյսերը հարստացնում են հողը բորակային խառնուրդներով, ինչպէս այդ բացատրւած է վերելում: Դրանից է, որ եօնջից յետոյ հացաբոյսերը տալիս են ընտիր հունձեր, կարծես թէ վարելահողը առատութեամբ պարարտացրած լինէր աղբով:

6) Արօտաբոյսերի շնորհիւ չոր եւ անջրդի տարերը եւ նրանց զտոխայրերը, որոնցից են բաղկացած լեռնային շերտի բնակչութեան այժմ շատ քիչ արդիւնք

բերող համարեա բոլոր մշակելու հողերը, կողտոնան պողատու արտեր և այդ կերպով, սակաւահողութեան հարցը լեռներում յետ կրնկնի երկար ժամանակով:

7) Խոտացանութիւնը տնտեսութեան մէջ մըտցընելով՝ կրկատարւի օգտաբեր փոխանցումն մեր՝ հացհատիկների դարևոր տնտեսութիւնից գէպի պտղափոխութեան սխտեմները: Գիւղացու տնտեսութիւնը աւելի բազմազան և կենդանի կրլինի, ընդունակ՝ յետագայ դարգացման. նրա հետ միասին կրմեծանայ նրա բարօրութիւնը և կընդհատուի ազգաբնակութեան քրօնիքական քաղցածութիւնը:

ԲԱԿԱՅԱՐՈՅՍԵՐԻ ԵՐԵՔ ԳԼԽԱԻՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻԶՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

ԱՌՈՒՅՏ (КЛЕВЕРЪ).

Կուլտուրական գլխատը տեսակներ.

ԿԵՐՄԻՐ ԱՌՈՒՅՏ, ՍՊԻՏԱԿ ԱՌՈՒՅՏ, ԶՎԵԿԱՆՆ ԱՌՈՒՅՏ:

Պատմական տեղեկութիւններ:

Առույտ՝ մշակում է բոլոր արևմտեան պետութիւններում: 300—400 տարի առաջ նա յայտնի էր արդէն Իսպանիայում և Իտալիայում: Անգլիայում առույտի մշակութիւնը սկսում է տարածել XVI դարից, որ վերջում շատ տարածեց և յայտնի եղաւ շնորհիւ Անգլիայի փափուկ և խոնավ էլիմային: Գերմանիայում առույտի մշակութեան տարածելը թէև կանգ առաւ, բայց XVIII դարից, Ֆրիդրիխ Մեծի պաշտպանութեան շնորհիւ նոյն գալի 50-ական թւականներին, իսկ յետոյ Յովսէփ II շնորհիւ, մեծ յառաջագրւումիւն արաւ, մա-

նաւանդ Գերմանիայի արևելեան գաւառներում: Ամերիկայում առույտը մշակում է արդէն 100 տարուց ոչ պակաս:

Հ Ո Ղ.

Առույտի համար ամենալաւ հողը պէտք է համարել կաւա-աւազախառն, ընդհանրապէս, թարմ հողերը, խորը վարելաշերտով, որոնք պարունակում են իրենց մէջ կիր և թափանցելի են արմատների համար: Առույտը երկարատեւ չէ լինում այն հողերի վրայ, որոնք ունին վարելահողի ծանծաղ շերտ, եթէ որ ներքևում, հողի տակ նրա արմատները հանդիպում են կամ կոշտ կաւի, կամ քարաշերտի կամ ջրի: Եթէ հողը թափանցիկ է, առույտին երբեք չի վնասում նրա մէջ եղած մինչև անգամ նըշանաւոր քանակութեամբ մանր քարն ու խիճը: Երևանի նահանգի բոլոր լեռնահողերը, որոնք ծովի մակերևոյթից 5000 ոտնաչանփից բարձր են գտնւում, աւելի կամ պակաս չափով պիտանի են առույտի մշակութեան համար, բացառութիւն են կազմում չափազանց չոր, գառիվայր, քարքարոտ սարալանջերը, յատկապէս հարաւային և ճահճուտ տեղերը ներքևում:

Հողի մշակութիւնը.

Առույտի համար հարկաւոր է անպատճառ հողի խորը մշակութիւն՝ գութանով: Առաջին վարը պէտք է տառն անել, որ ոչնչացնւին գիծ խոտերը: Վարած հողը թողնւում է մինչև գարունը ինչպէս խամահան գետին: Վաղ գարնանը նա նորից է հերկւում և խնամքով տափանւում է որպէսդի կարելիին չափ հերկի մակերևոյթը հաւասարւի և պատրաստուի ցանքի համար:

Յ ա ն ք.

Առույտը ցանւում է ստերատու բոյսերի հետ (հաճար, գարի, վարսակ, ցորեն): Ցանքի տարին, առհասարակ ստացւում է ստերատու բոյսի բերքը, իսկ երկրորդ տարին՝ առույտի բերքը: Առաջին տարին առույտի ծլերը շատ թոյլ են լինում և տառապում են արեգակի անմիջական լուսաւորութիւնից, դրա համար էլ նրանց անհրաժեշտ է պաշտպանութիւն և ծածկելի, որ տալիս է ստերատու բոյսը:

Առույտի ցանքը պէտք է անել որքան կարելի է վաղ, որ սերմն ընկնի գարնան խոնաւութեան տակ: Նախ և առաջ պէտք է ցանել ստերատու բոյսը փոքր ինչ քիչ քանակութեամբ, քան թէ առհասարակ ընդունւած է այդ բոյսի համար, որպէսզի խոյս տրւի առույտի վրայ չափազանց թանձր ստեր արձակելուց, իսկ յետոյ երբ տափանելուց սերմերը բաւականաչափ ծածկւած կըլինեն հողով՝ ձեռնարկել առույտի ցանելուն:

Դրա համար առույտի պահանջւած քանակութեամբ սերմը խնամքով խառնում են նոյն քանակութեամբ չոր աւազի հետ, եթէ ցանւում են առույտի խառնուրդներ (առույտը անգլիական որոմի, դաշտի Փլէտնի հետ և այլն), այն ժամանակ կարիք չըկայ աւազ խառնելու: Սերմերը ծածկւում են թեթև տափանով: Եթէ կարելի կըլինի՝ օգտուեալ է իսկոյն և եթ տափանել վարելահողը: Առույտի աշնանացանը պէտք է անել մօտաւորապէս օգոստոսի կէսին կամ վերջին, առհասարակ վաղ, այն հաշւով, որ ծլերը երևին և փոքր ինչ ամրանան նախ քան ցրտերի սկսելը: Մէկ դեպքերի վրայ պէտք է ցանել 1 փութ 20 ֆունտ առույտի սերմ: Պէտք է բերել տալ բոլորովին մաքուր սերմեր: Ռուսաստան

նում ամենալաւ սերմերը ստացւում են Պերմսկի նահանգից:

Հ աւ ա ք ե լ ը.

Լաւ հողերի վրայ և կլիմայական բարեյաջող պայմաններում, ինչպէս Անգլիայում, առույտը առաջին տարին էլ ստերատու բոյսի բերքից յետոյ հունձ է տալիս, երկրորդ տարին տալիս է երկու հունձ, հազիւ անգամ երեք: Միջակ հողերի վրայ առույտը տալիս է միայն մէկ լաւ հունձ 200—250 փութ, երկու հունձի ժամանակ ստացւում է 1 դեպքերից չոր խոտ 350—400 փութ: Առույտը չի կարելի թողնել միևնոյն տեղում 2—3 տարուց աւելի: Առույտի խոտի ամենագլխաւոր անդարար մասերը նրա ծաղիկներն ու տերևներն են, որոնք չորացնելու և հաւաքելու ժամանակ հեշտ կերպով պոկւում են, դրա համար էլ այդ գործողութիւնները պէտք է զգուշութեամբ կատարել: Տեղական եղանակը կիսաշոր խոտի հաւաքելու՝ խուրձ կապելն է, որի կշիռը լինում է մի քանի ֆնտից մինչև կէս փութ, որպիսի խուրձերով նա օդի մէջ մնալով՝ վերջնականապէս չորանում է, այդ եղանակը պիտի համարել ամենանպատակաւորմարը: Խոտի հաւաքելու ժամանակ պէտք է համարել դաշտից ստացած խուրձերի թիւը, ամբողջ խոտի միջից ընտրել 20 խուրձ կշռել և որոշել մի խուրձի միջին կշիռը, իսկ յետոյ բազմապատկելով մի խուրձի միջին կշիռը բոլոր խուրձերի ընդհանուր թւի հետ՝ մօտաւորապէս որոշել ամբողջ բերքը: Այնտեղ, ուր խուրձեր չեն շինում, բերքի մօտաւոր քանակը որոշել սայլաբեռներով:

Առույտը կանաչ դրութեամբ, յատկապէս անասուններին միանգամից առատ խոտաբաժնի տուած

դէպքերում, կենդանիներին փորձուողց է պատճառում և ծակոցներ առաջացնում, մանաւանդ ձիաններին: Իսկ չոր խոտի ձևով դաշտախոտի խառնուրդով կամ մինչև անգամ դարմանի հետ առույտը կերակրելու համար ամենասնդարար բոյսերից մէկն է: Նորանից տաւարը արագ կերպով ուղղւում է, կովերը կաթը շատացնում են, որի ժամանակ մեծ քանակութեամբ իւղ պարունակող և առհասարակ լաւ յատկութեամբ կաթ է ստացւում:

Լեռնաշերտում առույտի համար պէտք է նշանակել 2—3 տարի հանգիստ թողած վարելահողեր, որոնց վրայ ցանել առույտը հացի հետ միասին:

Քոյերի և փշերի փոխարէն, որ այժմ խոտի տեղ հաւաքում են այգալիսի անվար ու խամ թողած հողերից՝ գիւղացին կարող է առույտի ընտիր խոտի բերք ունենալ երեւի ոչ պակաս քան 200—250 փութ մէկ զեսետինից:

ԵՕՆՔԱ (ЛЮЦЕРНА).

Պատմական տեղեկութիւններ:

Եօնքան ամենահին արօտաբոյսերից մէկն է: Իտալիայում նրան զեռ մշակում էին 11 դարում Քրիստոսից առաջ: 400 տարուց աւելի Քրիստոսից առաջ, նա բերւեց Յունաստան, Իտալիայից նա տարւեց Փրանսիա: Գերմանիա բերւեց եօնքան XVII դարի երկրորդ կէսին: Մեզնում, Ռուսաստանում նա երևում է XIV դարի կէսից:

Եօնքի հայրենիքը համարւում է միջին Ասիան, ուր նրա վայրի տեսակները պատահում են մեծ քանակութեամբ: Բացի դրանից, նա պատահում է Սիբիրիայում, մեզնում—Պովկասում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում և Շվեյցարիայում:

Հ ո Ղ Ս.

Եօնքայի, ինչպէս նաև կերի համար ծառայող բոլոր բակլայանման բոյսերի համար, հող ընտրելիս պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել հողի ստորին խաւի վրայ, որը պէտք է թափանցելի լինի նորա մէջ անցնող եօնքայի արմատների համար:

Եօնքայի համար ամենայարմարը պէտք է համարել կիր պարունակող աւաղախառն կաւահողը:

Հողի մշակութիւնը և ցանքը:


Եօնքայի հող մշակելը ոչնչով չի տարբերւում առույտի համար մշակած հողի ձևից:

Ցանքը պէտք է կատարել չափազանց թանձր սաւեր չը տեղ սաւերատու (գարնանացան ցորենի, գարու, փուշի, վարսակի) բոյսի հետ միասին: Առաջին տարւայ շատ թոյլ ծիւերը սաւերի տակ չափազանց երկար ժամանակ չը պահելու համար գերուգասելի է սաւերատու բոյսի հնձելը՝ կանաչ (թարմ) կերի համար:

Երկանի նահանգում սաւերատու բոյսի տեղ ծառայում է գարնանացան ցորենը և գարին, որոնց թոգնում են հասնեն և յետոյ հնձում են, որի ժամանակ այդ հանգամանքը ոչ մի փափակար հետեւանք չի ունենում եօնքայի զարգացման համար, որ մեզնում, տափաստաններում տալիս է 3 հունձ և մօտ 500—600 փութ խոտ իւրաքանչիւր զեսետինից: Շատ ցանկալի կրկին էր մեզնում էլ փորձեր անել եօնքայի, առույտի և կուրինգանի շարքացանքը: Շարքացանքը ապահովում է սերմերի կորուստը՝ քամուց, ապահովւում է սերմերի լաւ թաղելը և տալիս է սերմերի նշանաւոր տնտեսութիւն:

Եօնքայի շագացանի մշակութիւնը, պրակով ցա-

29359-67



ներ) ժամանակ պահանջուով է մէկ դեսեատինի վրայ ցանել $1\frac{1}{2}$ -ց մինչև 2 փութ: Մեր փորձերի ժամանակ մէկ դեսեատինին յատկացուով է 1 փութ 20 ֆունտ:

Եօնջան պէտք է ցանել վաղ աշնանը և այն էլ միայն այն ժամանակ, երբ հողը մի փոքր կը չորանայ: Աշնանացանը կատարուով է օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին: Այդ դէպքում եօնջան կարողանում է զարգացնել իր արմատը, արմատականում է և հեշտ է դիմանում ցրտին և ամառային տաքին: Սերմերի թաղելը խոր չէ լինում, մօտ $1\frac{1}{2}$ վերջուկ, ցախից շինած թեթև տափանի օգնութեամբ: Սերմերի տափանելը շատ օգտակար է, բայց այդ գործողութիւնը պէտք է կատարել չոր ժամանակ, երբ հողը մի փոքր կը չորանայ և կըլինի բաւականին փութի:

Խնամքի տեսակէտից կարևոր նշանակութիւն ունի եօնջայի համար նրա տափանելը՝ աշնանը, վերջին ցանքի հաւաքելուց յետոյ, և մինչև անգամ զարնանը, երբ խոտը դեռ չի մեծացել: Միատեմատիքաբար տափանելու կարևորութիւնը ծագում է եօնջայի այն առանձնայատկութիւնից, որ նրա բողբոջներով ծածկւած արմատի պարանոցը, որից կախումն ունի թուփաւորութիւնը, իւրաքանչիւր տարի իջնում է միշտ ցած, ներքև ու ներքև՝ հողի մէջ: Պարանոցը ծածկող հողը զժւարացնում է բողբոջների զարգացումը և նոր ցողունների գոյանալը: Ուշադիր տափանելը ազատում է պարանոցը հողից և զօրեղացնում է թփաւորութիւնը, որի հետ նաև խոտի հունձը:

Հունձն ու հաւաքելը:

Լիովին յարմար հողերի վրայ, օրինակ Րիօնի տափաստանում, Քութայի նահանգում, եօնջան

տալիս է 4 և 5 հունձ, դեսեատինից 700 - 800 փութ խոտի բերքով:

Երևանի նահանգում առաջին հունձը հասնում է մայիսի վերջին օրերին կամ յունիսի սկզբներին: Այն ժամանակ պէտք է հնձել, երբ արդէն երևում են սկզբի ծաղիկները: Եօնջայի հաւաքելու ամենապատահալարմար եղանակը մեր պայմաններում պէտք է համարել տեղական միջոցը, խուրձերով հաւաքելը: Այդ եղանակով ամենաքիչ կորուստն է լինում եօնջայի ամենազլխաւոր և ամենասննդարար մասերի, այն է՝ ծաղիկների և չոր տերևների, որոնք հեշտ կերպով պոկւում են ամենափոքր հպումից:

Հաւաքելիս պէտք է համարել դաշտի որոշ տեղում հաւաքած խուրձերի թիւը, նրանից 20 հատը կշռել, որոշել մէկ խուրձի միջին կշիւը և բոլոր բերքի խուրձերի ընդհանուր թւի հետ բազմապատկելով՝ որոշել, թէ ընդամենը քանի փութ է ստացւած:

Եօնջան շատ սննդարար կեր է: Նրանով տաւարը արագ կերպով ուղղւում է և գիրանում, կովերը շատացնում են կաթը, կաթի իւղային մասը աւելանում է: Սակայն կանաչ դրութեամբ նա պատճառում է որովայնի փքումն, գրա համար էլ որպէս կանաչ կեր՝ նրան պէտք է տալ զգոյշ և քիչ քիչ՝ չը թողնելով, որ կենդանիները մէկէն կշտանան:

ԿՈՒՐԻՆՓԱՆ (ՅՏՓԱՐՇԵՏԻ).

Պատմական տեղեկութիւններ:

Վայրի կուրինգանը աշխարհի բոլոր կողմերում չի պատահում: Նա գտնւած չէ օրինակ Ամերիկայում, Իսպանիայում, Անգլիայում, Յունաստանում, Սարգիսիայում: Մեզնում՝ Կովկասում, նա պատահում է փոքր Կովկասի բոլոր լեռնաշերտի

վրայ, նոյնպէս և Գերմանիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Հարաւային Ռուսաստանում և այլն:

Ուրիշ երկրներէց վաղ կուրինգանը Ֆրանսիայումն էր յայտնի, յատկապէս Հարաւային Ֆրանսիայում, որտեղ նրա մշակութեան մասին կան տեղեկութիւններ դեռ XV-րդ դարից: Մշակւած կուրինգանը Մնացիայ է մտնում 16-րդ դարի վերջին և 17-րդի սկիզբին, ուր նա տարածւում է ընդարձակ իերպով: Գերմանիայում կուրինգանի մշակութեան տարածելը վերագրւում է 18-րդ դարի սկիզբին:

Հ ո ղ .

Կուրինգանը քիչ պահանջկոտ է հողի կողմից: Նա կարող է բուսնել ամեն տեսակ հողի վրայ, բացի մածուցիկ և ամուր կաւից, միայն թէ այդ հողը լինէր թեթեւ, ծակոտէն, թափանցկոտ նրա արմատների համար, որոնք անցնում են հողի ստորին խաւի խորքը մէկից մինչև 3 և աւելի սաժէն: Սակայն կուրինգանի հողը պէտք է պարունակի իր մէջ կիր: Նրա համար աւելի յարմար պէտք է համարել թափանցկոտ կաւա-աւազոտ և կիր պարունակող հողը, կարելին չափ դարձած դէպի հարաւ, հարաւ-արեւելք և հարաւ-արեւմուտք:

Մեր արած փորձերը կուրինգանի հետ Երևանի նահանգի լեռնոտ շերտերում, մանաւանդ Նոր-Բայազետի գաւառում, շատ աւելի համոզում են, թէ մեր լեռների չոր և ուժասպառ, անջրդի, քարքարոտ, խճոտ, հացարոյսերի մշակութեան համար երկրագործին համարեա ոչինչ չբաւող հողը ընդունակ է արտադրելու աշխարհիս մէջ լաւագոյն կուրինգան, որի մշակութիւնը լեռներում խոստանում է նորոգել և ամրապնդել գիւղական տնտեսւած

տնտեսութիւնը և բարձրացնել ազգաբնակութեան բարօրութիւնը:

Հ ո ղ ի մշակութիւնը.

Կուրինգանի հողի մշակութիւնը նոյնն է ինչ որ առույտինը և եօնջայինը: Կուրինգանը դեռ երկար ժամանակ չի կարող մտնել ցանքսափոխութեան մէջ նրա համար, որ նա աւելի երկար ժամանակ քան առույտը ու մինչև անգամ եօնջան ընդունակ է բռնել միևնոյն տեղը և տալ բոլորովին լաւ բերք: Յարմար և թափանցկոտ հողերի վրայ նա դիմանում է մինչև անգամ 15 տարուց աւելի: Դրա համար էլ աւելի յարմար է կուրինգանի համար յատկացնել առանձին հողաբաժիններ, անկիւններ կամ սեպերով շրջապատած հողամասեր:

Յ ա ն ք .

Կուրինգանը բաւականին դանդաղ է բուսնում, 2—3 շաբաթից ոչ փաղ: Բացի դրանից, նրա սերմերը թէև բաւականին խոշոր են, բայց թեթեւ են և դժւար են ծածկւում հողի տակ: Մինչև անգամ ամենայն խնամքով տափաներուց յետոյ էլ, նրանց մի մասը, մօտաւորապէս ¹/₃ մասը, մնում է հողի երեսին չը ծածկւած: Բուսներն արագացներու, կշիռը մեծացներու և սերմերը հողի մէջ թափանցելը հեշտացներու համար, օգտաւէտ է, ցանքից առաջ թրջել նրանց ջրի մէջ մէկից մէկ ու կէս օր: Այնուհետև կարելի է ազատ օդի մէջ ցամաքրած սերմերը ցանել: Չորացները այն աստիճանին պէտք է հասցնել, մինչև որ նրանք չը կաշին իրար և պիտանի լինին ցրւելով—շաղ տալով ցաններու համար: Կարիք չըկայ սերմերը թրջելու, եթէ աշնանը,

իր ժամանակին, որքան կարելի է՝ վաղ արւի ցան-
քը, քանի որ հողն ու օդը պահած են իրենց խոնա-
ւութիւնը:

Մեր փորձնական ցանքի ժամանակ մենք եր-
բէք սերմերը թրջելու կարիք չենք զգում:

Կուրինգանը կարելի է ցանել գարնանը եւ աշ-
նանը: Աշնանացանը պէտք է անել օգոստոս ամսում,
որ նա դեռ ցրտերը չեկած՝ կարողանայ ծլել և
ամրապնդւել: Աշնանացանը կարելի է անել առանց
ստւերատու բոյսի (ցորեն, գարի): Դեռ ամրան վեր-
ջին (օգոստոսին) ցանած կուրինգան, աւելի ճիշտ
— նրա արմատը, կարողանում է օգոստոսի, սեպ-
տեմբերի և հոկտեմբերի ընթացքում բաւականին
խոր թափանցել հողի մէջ և արմատանալ, որի
շնորհիւ էլ նա ազատ կարող է դիմանալ հետեւեալ
տարւայ ամրան շոգերին: Գարնանացանի ժամա-
նակ, դրա հակառակ, կուրինգանի մատը չի կարո-
ղանում այն աստիճան զօրանալ, որ չրվասուի արե-
գակի տաքութիւնից, դրա համար էլ կուրինգանը
անպատճառ պէտք է ցանել ստւերատու բոյսի հետ, որի
շւաքի տակ կուրինգանի սկզբի նուրբ ծլերը չեն փառ-
ւում արեգակի ճառագայթների ազդեցութիւնից:

Իւրաքանչիւր գետեատինի վրայ կուրինգանը
պէտք է ցանել մօտ 15 փութ, նկատի ունենալով
նրա սերմերի տափանելու զփարութիւնը և նրա
հետեւանք՝ այդ սերմերի ¹/₃-ի կորուստի անխուսա-
փելիութիւնը: Յանելով մէկ գետեատինի վրայ 12
փութ կուրինգան, մենք խորհուրդ ենք տալիս
ստւերատու ցորենի կամ գարու սերմը նրանից մի
փոքր քիչ ցանել, այսինքն 8-ից մինչև 10, որպէսզի
չափազանց չըստւերոտին կուրինգանի ծլերը: Կուրին-
գանի և ստւերատու բոյսի սերմերը կարելի է խառ-
նել իրար և ի միասին ցանել, կարելի է և առան-

ձին — առաջ կուրինգանը, իսկ յետոյ՝ ստւերատու
ցորենը կամ գարին:

Յանքից յետոյ, վարելահողը խնամքով տափա-
նում են, որ, որքան կարելի է, լաւ ծածկւեն կու-
րինգանի սերմերը: Եթէ հողը շատ թաց չէ, պէտք
է առանց յետաձգելու հարթել — տափանել ցանքը,
իսկ հակառակ դէպքում, սպասել երբ վարելահողը
մի փոքր կը չորանայ և այնուհետև հարթել — տա-
փանել հողը: Հարթիչը սխմում է հատիկները նամ
գետնին, որից նրանք աւելի շուտ են դուրս պրծ-
նում և նրանց փոքրագոյն մասը մնալով գետնի
երեսին՝ չորանում է կամ թռչունների կերակուր է
դառնում:

Հունձն ու հաւաքելը.

Առաջին տարին (ցանքի տարին) քաղւում է
ստւերատու հացի հունձը, երկրորդ տարին՝ ստաց-
ւում է կուրինգանի առաջին հունձը: Կուրինգանի բերքի
որքանութեան չափը որոշւում է սովորաբար ցան-
քի երրորդ տարուց յետոյ, երբոր նա հողի և կլի-
մայական բարեյաջող պայմանների ժամանակ տա-
լիս է արդէն երկու և սակաւ անգամ երեք հունձ
— քաղ: Երկու քաղին բերքը 1 գետեատինին տալիս
է ոչ պակաս քան 300—400 փութ խոտ:

Մեր փորձնական ցանքերը, Նոր-Բայազիտի գա-
ւառում ամեն տեղ տին երրորդ ամսոր երկուսական քաղ՝
գետեատինին 400 փութ բերքով: Ամենաբարեյաջող
պայմանների ժամանակ, կուրինգանը միևնոյն տե-
ղում դիմանում է 15 և աւելի տարիներ, աւելի
պակաս բարեյաջող պայմաններում՝ 8—10 տարի:


Եթէ կուրինգանը տալիս է մէկ բերք, նրան
պէտք է հնձել իր լիակատար կերպով աճած — ծաղ-
կած ժամանակ, եթէ նա տալիս է երկու կամ երեք

բերք, այն ժամանակ պէտք է հնձել ծաղկելուց
առաջ, երբ արդէն յայտնուում են ծածկող ճիւթերը:

Կուրինգանի հաւաքելը ոչ մի դժւարութիւն չի
ներկայացնում: Նա չորանում է աւելի շուտ՝ քան
եօնջան և առույտը: Տեղական եղանակը, այն է՝
կիսաշոր խոտից խուրձեր կապելու և խուրձերով
չորացնելը բոլորովին նպատակայարմար է և կու-
րինգանի համար:

Կուրինգանը իբրև կանաչ կեր՝ չի փքացնում
կենդանիներին, իսկ կաթի յառկութիւնը զգալի չա-
փով լաւանում է: Առհասարակ նա համարւում է
ամենաառողջ կեր ինչպէս չոր՝ նոյն և կանաչ ձևով,
որ հաճութեամբ ուտում են կենդանիները առանց
մի փասի:

Մեր յիշատակած փորձացանքերը դրականա-
պէս հաստատեցին, թէ կուրինգանը ծովի մակերեսային
Ճ.Ս. ուննաչափ քարձր՝ ջրելու կարիք չի զգում: Հարա-
ւային բոլորովին անջրդի սարալանջերում, Ռնդա-
մալ, Դարաչիչակ, Մաքրավանք, Ախպարա, Ախտա,
Մուխոյ Փանտան և այլ գիւղերի սահմանում նա
ամառը տալիս է երկու քերք: Այդ խոտին վիճակւած է
մեծ դեր խաղալ ոչ միայն երեանի նահանգի լեռ-
նաշերտի, այլ և Անդրկովկասի բոլոր լեռնաքնակ
երկրագործ ազգաբնակչութեան կեանքի մէջ: Նա կոչ-
ւած է կենդանացնելու մեր դատարկ սարալանջերը,
որոնք մինչև այսօր ոչինչ չեն տւել հացաբոյսերի
մշակութեան համար և աւելի շուտ ծառայել են
ինչպէս ստիւաւարժէք ամառային արօտատեղեր՝
քան իսկական մշակութեան արժանի հողեր:



Ա. ԱՐԴԱՍԵՆՈՎ:

	Apr.
3-3124	

6

✓

7754

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0080778

115-31242